

Տարեկան գինը 10 բուլլի. կէս տարվան 6 բուլլ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում զրկում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԴՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Շինարար գործունէութիւն. — ՆԵՐՔԻՆ ՏԵ-
ՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Երկրաշարժից վնասված-
ների օգտին. «ՄԻՋԻՆԶ». Նամակ Նոր-Նախի-
ջեանից. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ. Արտաքին լուրեր. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. —
ՅԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.
Նամակ Գրեմանիայից:

ՇԻՆԱՐԱՐ ԳՈՐԾՈՒՆԵՐԻ ԹԻՒՆ

Սև ծովի արևելեան ափերում գտնվող
պետական հողերի մի մեծ տարածութիւն
բաժանվեց մանր կտորների և տրվեց ցան-
կացողներին այն պայմանով, որ վերջնող-
ները մշակեն այդ հողերը: Այն անձինք,
որոնք մի որոշ ժամանակամիջոցում անկա-
յող կը լինեն կատարել այդ հիմնական
պայմանը, պէտք է նորից վերադարձնեն
պետութեանը իրանց վերցրած հողերը:
Դնելով մի այդպիսի պայման, կառավարու-
թիւնը հաւատացած էր, որ շուտով Սև
ծովի արևելեան ափերը կը ծածկվեն մեծ
այգիներով, շքեղ ծառատունկերով և ա-
մեն տեսակ շահաւէտ բոյսերով:

Սակայն կառավարութեան յոյսը շատ
դէպքերում չարագործացաւ և հող վերցնող-
ները ցոյց տուին, որ նրանց մի ստուար
մասին այնքան չէ ոգեւորել կուտու-
րական, օգտաւէտ գործ կատարելը, որքան
նեղ անձնական շահեր որոնելը և սպեկու-
լյացիա անելու գիտաւորութիւնը: Պե-
տութիւնից անմիջապէս հող վերցնողների
այդ մասը, զոչ լինելով այն հանգաման-
քից, որ նրանց աճողվել է ձրի կերպով
կարւածքներ ստանալ այնպիսի տեղերում,
ուր հողի գինը օրից օր բարձրանում է,
շատ շուտով իրանց վերցրած հողերը ծա-
խեցին ուրիշ մարդկանց թանգ գներով:

Այդ երեւոյթի վրա կառավարութիւնը
այժմ ուշադրութիւն է դարձրել և կար-
գադրել է, որ վերցրած հողերի վաճառու-
մը դադարեցնվի: Եթէ հող վերցնողը ան-
կարող է ամբողջ տարածութիւնը մշակել,
նա պէտք է այդ աւելորդ, անմշակ միա-
ցած մասը վերադարձնի պետութեան, որը
և կը կարգադրի այդ հողերի վիճակը:
Սև ծովի արևելեան ափերի հողերը մեծ
ապագայ ունեն թէ գիւղատնտեսական
արդիւնաբերութիւն զարգացնելու հա-

մար և թէ մի շարք առողջապահական
կայարաններ, ամառանոցներ ու ձմեռանոցներ
շինելու համար: Յանկայի է, որ իսկապէս
այդ հողերը ընկնեն գործ կատարողնե-
րի ձեռքը, որոնք շենացնելին մեր երկ-
րի այդ հարուստ և հաջուգաւոր մա-
սերից մէկը: Սև ծովի այդ ափերը
կարողանում են աճեցնել բազմատեսակ
բոյսեր և մի քանի տեղերում նրանք ըն-
դունակ են արտադրել հարաւային բը-
նութեան բուսական հրաշալիքները ա-
ռանց գիմելու ջերմոցների և ուրիշ
արհեստական միջոցների:

Դիտաւորութիւն կայ Սև ծովի ափերի
ամբողջ զծով անցկացնել երկաթուղի և
աւելի զարգացնել ծովագնացական հարցը-
րակցութիւնը զանազան տեղերի մէջ: Այդ
բոլորը, միացած մի շարք կուլտուրական
ձեռնարկութիւնների հետ, կը դարձնեն
մեր երկրի այդ մասը մի գրաւիչ տեղ, որը
դէպի ինքը կը գրաւի բազմաթիւ այցելու-
ներ Առեւտրատանի զանազան մասերից
օգտվելու նրա կլիմայից, օգտվելու նրա
արդիւնաբերութիւնից:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Հեռագիրը հաղորդեց ժողովրդական լուսա-
ւորութեան միջնադարի այն շրջաբերականի մա-
սին, որ միջնակարգ դպրոցների հարցաքննա-
կան սխառն մէջ մտնում է նոր կարգ: Վա-
ղուց մանկավարժների մեծամասնութիւնը քա-
րողում է, որ տարեկան հարցաքննութիւնները,
գտնէ այն աշակերտների վերաբերմամբ, որոնք
դասարանից դասարան պիտի փոխվեն, անըն-
պատկալարար են, ներկայացնում են մի
հնացած ձև. տարեկան հարցաքննութիւնները
ոչ միայն կարող չեն աշակերտի պատրաստու-
թիւնը և ընդունակութիւնը պարզել, այլ և
շատ դէպքերում ուղղակի անարդարութեան
կերպարանք են ընդունում: Հարցաքննութեան
ժամանակ լաւ կամ վատ պատասխան տալը
մեծ մասամբ պատահական հանգամանք ունի,
մինչդեռ աշակերտի իսկական ընդունակութիւն-
ների վրան կարող էր լինել այն մի տարին,
որ նա անց է կացրել դասարանում, հետեւա-
բար և այն առաջնորդութիւնը, որ ցոյց է
տուել աշակերտը մի տարվայ ընթացքում, պի-

տի վճռէ թէ արժանի է աշակերտը, որ փոխա-
դրվի միւս դասարան կամ արժանի չէ: Չը
պէտք է մոռանալ և այն հանգամանքը, թէ
աշակերտը որքան լարում է իր ոյժերը, որքան
տանջում է իրան՝ հարցաքննութիւններին
պատրաստվելու համար: Այդ բոլոր հանգա-
մանքները վաղուց ցանկալի են դարձրել, որ
հարցաքննութիւնները վերացվեն. և միջնա-
րական նոր կարգադրութիւնը գալիս է մա-
սամբ բաւարարութիւն տալու այդ ցանկու-
թեան:

Շնորհիւ այդ շրջաբերականի—ասում է
«Русскія Вѣд.» լրագիրը—գիմնազիաների
աշակերտների գտնէ կէսը ազատված կը լինի
հարցաքննութիւններից: Այս կարգադրու-
թեան չէ կարելի չը վերաբերվել կատարեալ
համակարգով, թէև հարցը դրանով, ի
հարկէ, վերջնական լուծում չէ ստանում:
Կարելի է յուսալ, որ նոր կարգադրութիւն-
ներ էլ կը լինեն շուտով և մեր միջնակարգ
դպրոցի հարցաքննութիւնները վերջնակա-
նապէս կը կարգաւորվեն:

Ինչպէս յայտնի է, նոր կարգադրութեամբ
առանց քննութիւնների դասարանները փոխել
կարող են այն աշակերտները, որոնք յայտնի
առարկաներից յայտնի թւանշաններ են ստա-
նում. ուրեմն այդ պայմաններին չը համապա-
տասխանող աշակերտները պիտի քննութիւն
տան: Ներկայումս, ինչպէս յայտնի է, ժողո-
վրդական լուսաւորութեան միջնադարութիւնը
զբաղված է միջնակարգ ուսման ընթացքի
հարցով: Մի առանձին յանձնաժողով, որ նե-
թեր է մշակում, ունի իր ծրագիրը հարցա-
քննութիւնների վերաբերմամբ. այդ ծրագիրն է
ակնարկում Մօսկվայի լրագիրը, յոյս յայտնե-
լով, որ միջնադարութիւնը չի բաւականանալ
ներկայ մասնաւոր բարեփոխութեամբ: Բայց,
ի հարկէ, եղանակ էլ չափ համակրելի բան է
և բարեփոխող աշխատող աշակերտները կարող
են ապահով լինել, որ իրանց տարեկան ջանա-
սիրութիւնը հարցաքննութիւններից ազատվե-
լու մի փայլուն միջոց է:

Շատ դժգոհ է Պարիզի «Համալսարան» ամ-
սագիրը մեր իրականութիւնից: Ուստի և և
րեմիականներ է թափում մեր օրերի և մարդ-
կութեան ժամանակակից վիճակի վրա, երե-
միականներ, որոնք, ի դէպ ասած, բերելական
ոճ էլ ունեն:

Այո, քաղաքակրթութիւնը, այն բազմա-
թիւ բարեփոխումն է, որ այնքան առա-
տաճեւորութեամբ ըմբռնւում է մեզ, մանա-

ւանդ այս վերջին դարերու մէջ, հասուցած
է նաեւ անթուկի շարքերին, որոնք ցեղե-
րու նման կախում մարդկութեան ստին-
քներէն անընդհատ կը ծծեն ու կը ծծեն...:
Ընկերութիւնները ապականած են. ընտանե-
կան շրջանակները պղծուած՝ վատ բարքերու
ազդեցութեան տակ և կեղծիքն ու խաբէու-
թիւնը մեծ դեր կը խաղան առօրեայ կիսն-
քին մէջ: Շատ հազուադէպ ու աննշանակալի
են այդ դէպքերը, որոնք իրենց կեանքը,
զոյութիւնը պահպանելու ոգորումին մէջ՝
բաց ճակատով աղին պայքար մղեն, ընա-
կան կամ պատահական խոչընդոտներու
դէմ: Մեծամասնութիւնը գիտւում է միշտ
նենգամիտ մեղեքնութիւններով: Մարդա-
սէրի զոյղին տակ վարագործուած կը գտ-
նենք շատ անգամ մարդախոշոյ ճրէշ մը. ու
երբեմն, բարեմիտ կարծեալ ծածկողներ չո-
ղքորթի մը լորձուկներ կը ցայտագնեն մեր
երեսին: Անձնական կերքեր ու եսասիրական
ստիպող զգացումներ վերջացող դարուն ա-
ռաքնութիւններն եղած են:

Իրողութիւնը իրողութիւն է: Բայց ո՞վ պի-
տի աւելի բարեբաւոյնի օրիւր պատրաստէ այս
ողբալի մարդկութեան համար:—Ընդհանուր
առաջադրմութիւն է հարկաւոր, իսկ այդ բանի
մէջ կան ոյժեր, որոնք գործ կարող են կա-
տարել, եթէ հասկանան իրանց պարտաւո-
րութիւնները: Գործիչների մէջ առաջին տեղը
տրվում է մամուլի ներկայացուցիչներին, գրա-
դէտներին ու վիպասաններին: Բայց ցանկ այն
է, որ մեր մամուլը, «Համալսարանի» սակով,
միանգամայն անպէտք է. նա ուղղակի ասում
է. «Հայ մամուլը հիւանդ է. մենք պէտք չու-
նենք հիւանդ մամուլի մը»: Ի հարկէ, եթէ հի-
ւանդ է, պէտք է բժշկել նրան. և Պարիզի
ամսագիրը ունի իր ձեռքին պատրաստ դեղա-
տոմս. բայց որքան չիփթութիւն դեղերի մէջ,
որքան ընդհանուր բառեր, որոնք ամեն մի
գեղագործի պիտի հարկադրեն ուսերը շարժել
և արտասանել. «Չեմ հասկանում»: Սկսեց
հէնց նրանից, որ «Համալսարանը» մամուլի հի-
ւանդութեան պատճառներով մէկը համարում
է «գաղափարի ու դաւանանքի տարբերու-
թիւնները»: Ահ, այս բառերը տպվել են Եւ-
րոպայում, որ այժմ ամայի ու անկենդան կը
լինէր, եթէ գաղափարի ու դաւանանքների
տարբերութիւնները չը ցնցէին նրան: Գաղա-
փարի ու դաւանանքի տարբերութիւններ չեն
ընդունում ասիացիները, նրանք, որոնք աշ-
խատում են գերեզմանական հաւասարակշռու-
թիւն հաստատել մարդկանց դանդաղ տակ:
Բայց ինչ են տուել նրանք և միթէ երջա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԱՅԻՑ

Լէյպցիգ, մարտի 28-ին

Ուշագրաւ երեւոյթը, որ վերջին շաբաթներս
գերմանական բարձր դասակարգի, այսպէս ա-
սած՝ մտքի արիստօկրատների բոլոր չերտերը
այնտեղում է, դա Հէյնցէ—օրէնքի (lex
Heinze) հակաշարժումն է:

Դեռ 90-ական թւականների սկզբներին Բեր-
լինի պատմական դատարանի առաջ ներկայա-
ցան Հէյնցէ ամուսնիները, որոնք իրանց
պտոնկային պօգալի արարքների երեւան դա-
լովն այնպիսի նողկանք առաջացրին հասարա-
կութեան ամեն շրջաններին մէջ, որ նոյն իսկ
ինքն կայսր Վիլհելմը նախանձախնդիր հանդի-
սացաւ և կառավարութեան ուշադրութիւնը
հրաւիրեց, պատժական խիստ օրէնքների մի-
ջոցով, հետամուտ լինել այդպիսի խայտա-
ռակութիւններին: 1892 թւին կառավարու-
թեան կողմից բէյլստագին ներկայացրած օրի-
նադիրը ժողովրդի ներկայացուցիչները անըն-
դունելի համարեցին և նա ընկաւ, բայց բոլո-
րովին չանհետացաւ և մի քանի անգամ էլ
նորից բէյլստագի չէմքը խոխեց, սակայն միշտ
արտաքսվելու բաղձին արժանանալով:

Օրինագիւրը առաջին անգամ կառավարու-
թիւնից առաջարկված և բէյլստագից մերժ-

ված լինելուց յետոյ, կենտրոնի (կաթօլիկ կղե-
ւակներին) կուսակցութիւնը այդ ծրագիրն օ-
րէնք դարձնելու նախաձեռնութիւնը իր վրա
առաւ և մի քանի անգամ անաջող փորձ անելուց
յետոյ, այս սէպտեմբերին էլ իրկին մէջտեղ բերեց,
և աշակերտականների օգնութեամբ՝ աշողութեան
ճանապարհի վրա է. արդէն երկրորդ ընթեր-
ցանութեամբ ընդունված է և նոյն իսկ եր-
րորդ ընթերցանութեան հասել էր և անառ-
բակոյս կանցնել, եթէ ձախալուղմանները՝
արմատականների հետ միացած՝ օբստրուկցիայի
միջոցին չը դիմէին և զանազան առաջարկու-
թիւններով ու անուանական քուէարկութեան
պահանջումով չը ձգձգէին, վերջն էլ ժողովի
դաճիճից հետնալով, վաւերական վճիռ կա-
յացնելու համար պահանջված ներկայացուցիչ-
ների թիւը (200) չը լրացաւ, որով գէթ մի
առժամանակ օրինագիւրը քնեց:

Ընթերցողն առաջին ակնարկից դժուարու-
թեամբ կըմտնէ պտոնկութեան դիմադրելուն
վերաբերվող մի պատժական օրէնքի և մի
ազգի, ինչպէս գերմանական է, ընտրի դասա-
կարգի առաջացրած շարժման մէջ եղած կայն
ու յարաբերութիւնը: Ըստ երեւոյթին անմեղ
խօսքեր են, որոնք պտոնկութիւնը շահագործող-
ներին պատժող օրէնքին կցված են և որոնք
վերաբերում են գեղարուեստին և գրականու-
թեան առնադարձի նրանք ասոււ են, թէ մի
և նոյն պատժին կենթարկվին այնպիսի ա-
ռարկաներով առեւտուր անողներ, որոնք նոյն
իսկ «առանց անպարկեշտ լինելու, մարդու ա-
մօթխանութեան և բարոյականութեան զգա-

մունքին կուպիտ կերպով դիպչում են»: Օրի-
նակ՝ մերկ մարդը, լինի նկար, կամ արձան,
կամ գեղարուեստական մի գրքի մէջ նկարա-
դրած, մի և նոյնն է. կենդանի մարդկանց
ամօթխանութիւնը չէ կարող տանել զրանց.
օրէնքի պաշտպանները ընդունում են հաւանօ-
րէն, որ լոկ այն մտածմունքն անգամ, թէ
մարդիկ իրանց չորեքի տակից մերկ են, ան-
պարկեշտ է և ամօթալի: Եւ ամօթխանու-
թեան աստիճանացոյցը պիտի լինի դատաւորի
համար, որն այդ օրէնքը պիտի գործադրէ, մի
«նորմալ միջակ-մարդ» (normaler Durchschnitts-
mensch)!

—Օհ, ո՞հ, կը մտածէ երեւի ընթերցողը,
միթէ կարելի է Գերմանիայում այդպիսի օրէնք
ստեղծել:—Այո, և այդ կարելիութեան դէմ է,
որ այսօր զայրացել է մտքի ազնականութիւնը.
օրինագիւրը գնլ վերոյիշեալ և նման խօսքերի
երեւան ասել է, որ սաստիկ բարկութեամբ
լցնում է անընտանաւոր և ազնիւ մտածողների
միջոցը, բողոքի աղաղակը բարձրացնելով:

Շատ ուշ, արդէն բէյլստագում երկրորդ
ընթերցանութեամբ ընդունված էր օրինագիւրը,
երբ սկսվեց բողոքի շարժումը. սկսվեց Բերլի-
նից և աւելի ուժեղ արձագանք գտաւ Միւն-
խից ու ամբողջ գերմանիայի շատ աչքի ընկնող քա-
ղաքներ: Բերլինի և Միւնխենի գեղարուես-
տական ակադեմիաները՝ զայրացած՝ իրանց բո-
ղոքները ներկայացրին բէյլստագին. բողոքի
ժողովներին մասնակցեցին մտքի և արուեստի
հսկաներ, որպիսիք են աշխարհահռչակ գիտնա-
կան Թէօօր Մօսլերն և մեծ նկարիչ Ֆօն-

Մէնցել և ուրիշ շատ յայտնի պրօֆէսորներ,
գիտնականներ ու գրադէտներ, ինչպէս և
գեղարուեստի զանազան ճիւղերի յայտնի ներ-
կայացուցիչներ: Որքան մեծ հետաքրքրութիւն
են պատճառում այս քաղաքներում արտասան-
ված ձառերը... Դժբաղդաբար անհնարին է մի
առ մի մէջ բերել դրանք:

Չը նայած այսպիսի լուրջ և զարգացած
դասակարգի ցամաք բողոքին, կենտրոնի և
պահպանողական կուսակցութիւնները մնացին
իրանց համոզմունքի մէջ (եթէ միայն կարելի
է այդ բառը գործադրել պարլամենտական քա-
ղաքագէտների վերաբերմամբ) և հրատարակե-
ցին բողոքողներին իրեն անհասկացողներ
նրանք էլ իրանց «էջը պիտի քշէին», եթէ,
ինչպէս վերը յիշված է, ձախալուղմանները և
արմատականները գէթ առժամանակ չը յետա-
ձգէին գործը: Բայց այս բողոքողներից, ան-
ցեալ օրը Բերլինում Հերման Զուգերմանի նա-
խագահութեամբ մի բազմամարդ ժողով էր հը-
րաւիրված, որին մասնակցեցին շատ ակադե-
միական և արտադրական զանազան միալի-
բել է, կազմին մի մշտական միութիւն, Գեր-
մանիայի քաղաքական և մտաւոր կեանքի
վրա մշտական բարեբար ազդեցութիւն գոր-
ծիլու համար: Ժողովը գումարված էր այդ
միտքը իրագործելու. «Գէօթէ-միութիւնը»
(Goothe Bund) կազմվեց, նպատակ ունենալով
հոգու ազատութիւնը ամեն դէպքում անխախտ

զայրոյթ Ուէլսի պրինցի դէմ արած սպանութեան փորձի առթով եւ ինքնիշխան յայտնել Ուէլսի պրինցին չորսաւորութիւն վտանգից ազատելու առիթով: Դեղիստէ հեռագրաց կամօքնին՝ յանձնարարելով նրան չորսաւորութիւն յայտնել սնդկիւն կառավարութեան:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏՆՈՒՄ Է

ԱՐԴԱՆԱՆ, Մ. Ա. Խ. Ձեր նամակը անհասկանալի է: Ըստ երեւոյթի տեղի է ունեցել հասցէների փոփոխութիւն: Ձեր ուղարկած գումարը մնում է առանց գործադրութեան: Կարգադրեցէք:

Խմբագիր՝ ԱԼԷԿՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍՏԱՆԱ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԴՐԿՈՎՆԱՍԵԱՆ ԵՐԿԱՐՈՒՂԻ

№ 1 գնացքը: № 3 գնացքը:	
Բազմից դուրս է գալիս ցեր. 4 ժ. 15 ր. ցեր. 12 ժ. 20 ր.	
Բիֆիլիս է հասնում առ. 8 ժ. 40 ժ. ցեր. 6 ժ. 28 ժ.	
Բիֆիլիսից դուրս է գալիս 9 ժ. 10 ժ. ցեր. 7 ժ. 32 ժ.	
Բազմում է հասնում ցեր. 8 ժ. 32 ժ. առ. 8 ժ. 12 ժ.	

№ 2 գնացքը: № 4 գնացքը:	
Բազմից դուրս է գալիս առ. 9 ժ. 15 ր. ցեր. 9 ժ. 05 ր.	
Բիֆիլիս է հասնում ցեր. 8 ժ. 53 ժ. առ. 9 ժ. 45 ժ.	
Բիֆիլիսից դուրս է գալիս 9 ժ. 25 ժ. ցեր. 11 ժ. 32 ժ.	
Բազմում է հասնում ցեր. 1 ժ. 04 ժ. ցեր. 6 ժ. 15 ժ.	

Դ Ի Լ Ի Ժ Ա Ն Ս Ե Ր

Հինգ հոգու համար:

Թիֆլիսից դուրս է գալիս 7 ժ. առ. 9 ժամ առ. 9 ժամ առ.	
Վրացի կապիտան հասնում է 7 ժ. 20 ր. ցեր. 9 ժ. 20 ր. ցեր.	
Վ. և Գ. հոգու համար 7 ժ. 20 ր. (չեն գիշերում)	
Թիֆլիսից դուրս է գալիս 1 ժ. ցեր. 7 ժամ ցեր.	
Վրացի կապիտան հասնում է 3 ժ. 25 ր. ցեր. 9 ժ. 50 ր. ցեր.	

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԴՐ ՀԻՄՆԵՒԱՆՈՑ

Բ. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուլիս, Վորոնյովի արձանի հանդէպ)
ա մ ե ն օ Ր, բ ա ց ի կ ի ռ ա կ ի օ Ր Ե Ր Գ:
Ա Ռ Ա Ռ Տ Ն Ե Ր Ը

Բ. Ա. Նախասարգեան—11—12 ժ. իրարածութեան, վերականգնողական և միջոցառող հիւանդ.
Կ. Մ. Չիլիպով—9—10 ժ. աղբի, ներքին և ներքին հիւանդ.
Գ. Բ. Բարանասեան—11—12 ժ. կանանց և երեխայից հիւանդ.
Ա. Ն. Շալապով—12—1 ժ. աղանջի, կոկորդի և բիֆի.
Ա. Պ. Կարապետեան—1—1½ ժ. ներքին և երեխայից հիւանդ.

Ե Ր Ե Կ Ո Ն Ե Ր Ը

Ա. Ն. Շալապով—6—7 ժ. ներքին (կեղծարարական), վերականգնողական և միջոցառող հիւանդ.
Բ. Ա. Նախասարգեան—7½—8 ժ.
Վ. Մ. Շալապով—քիմիական և խոլերայացուցական հետազոտութիւն.
Վ. զար. 50 ր. չորսորդներ ձիւն համալորչով (կոնսերվատիւ) և օպերացիայի համար տեսնելին.
Ս. Ց. Առաքելեան—տանը, ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.

Հիւանդանոցի վերատեսուչ՝
110—150 Բժշկապետ ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ

Պետերբուրգի բժշկական վարչութեան իշխանութեանը: Մեծ արկղիկի 5 բոլորի, փոքրը—3 ր. և 1 ր. 50 կ.:

ТИФЛИСИНЪ
ՆՈՐ ՄԻՋՈՑ
մազերը բուսցնելու և ամրացնելու համար, ոչնչացնում է թեփու Դուրս է եկել նաև բոլորովին նոր միջոց

ՁՈՒԻ ԿԱԹԸ
երեսին քնքշութիւն և սպիտակութիւն տալու համար, ոչնչացնում է արևի պատճառած սևութիւնը, մուգները, տալիս է կաշուին քնքշութիւն և սպիտակութիւն: Այդ գնքը չափաւոր են. մեծ արկղիկ, արկղիկի մէջ, 2 բոլորի, փոքրը—1 ր. 50 կ. Մարմնով են բոլոր պարֆումերական և դեղաւաճառական խանութներում: Գլխաւոր պահեստը գտնուում է Պետերբուրգում, Պուշկինսկայա փողոց տ. № 15, բնակարան № 12. պահեստի բաժանմունքները գտնուում են. Թիֆլիսում կովկասեան դեղատան ապրանքների վաճառման ընկերութեան խանութում՝ Երևանեան հրապարակ և նրա բաժանմունքում, Միքայելեան փողոց և Բազում. նաև Միքայելեան կամուրջի վրա, Կապովի և Արստակովի դեղատներում: Օտարաբաղադրացիների պատուէրները կատարվում են անմիջապէս՝ պատուով: 52—100



Ստեփանեան մարկան հաստատված կառավարութիւնից:

մի լրագրի միջոցով, որից յետոյ այդ լրագրին արտասովորական ուրիշ լրագրներում, պատիւ ունիմ յայտնելու ի զիտութիւն ամենքի, թէ

Վ. Վ Ի Ս Օ Ց Կ Ի եւ ԸՆԿ. Ը Ն Կ Ե Ր Ո Ւ Թ Ե Ա Ն

ՄՕՍԿՎԱՅԻ ԹԷՅԻ ԳՈՐԾԱՐԱՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ԱՇԽԱՏԵԼ

առաջիկայ նման նախկին այժմ, շատ աւելի ընդարձակ շինութեան մէջ:
Կառավարիչ Վ. Վիսոցկի եւ ընկ. Թիֆլիսի գրասենեակի՝ **Ա. ԳՐԺԵՐԻՆ**

2—5

ԹԻՖԼԻՍԻ ԿՐՈՒԹՕԿ

Կիրակի, մարտի 26-ին
Վ. Վ. Լ Ո Ւ Ն Կ Ե Վ Ի 2
կը կարգայ
իր վերջին հրապարակական դասարանութիւնը աշակերտների համար

ՋՐԻԱԿԵՐ ԵՒ ՀԱՅԱՓՈՐ ԱՇԽԱՏԱՌՆԵՐԸ ԿԵՆԴԱՆՆԵՐԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Դասարանութեան ժամանակ ցոյց կը տրվեն պատկերներ մոզական լապտերով:

Ակզբը ցերեկվայ ժամը 12-ին:

Ցամաքները (50, 30 և 20 կօպ.) Մեանիկովի մաքայնում, Գեօրգիայա փողոց, Թիֆլիսի գրասենեակում և պարիսնում, Գեօրգիայի պրոսպեկտ, իսկ դասարանութեան օրը Կրոմօկի շինութեան մէջ:
3—5

ՏԵՂԵԿԱՏՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿ

„Մ Ի 2 Ն Ո Ր Դ“

(Посредникъ)

Դ. Ի. ԵՆԿԻՄՈՎԻՉԻ

Պուշկինեան պատմ, Թամաշևի թարգմանաւորայի հանդէպ:

Կատարում է զանազան յանձնարարութիւններ անչարժ կաշերի ծախելու և գրաւ գնելու: Պահանջվում է առաջին և երկրորդ գրաւակաւում փող: Մանրամասնութիւնների համար խնդրեմ դիմել գրասենեակը: № 3. 0—19

Շ Ե Ր Ա Մ Ի Ս Ե Ր Մ

Բաղադրի սպիտակ, ամենալաւ տեսակից, չեւրամադանական կաշերանի սպիտակ ցէլլուլեա խօքը չը գծված, բանդերով, էծան գնով: Հարցնել Թիֆլիսում, Սիմոնի փողոց, եղբարք Մէլիք-Մարութեանցների խանութում: 2—3

ПИТАТЕЛЬ-НЫЙ НАПИТОК
Чистый Kakao Шоколеръ

Կ Ա Վ Ս Օ
Բազմ նախաճաշ և միջին 4 կօպ.
Բժշկական պարամետրիկին
Մարտի և սեպտեմբերի ամիսներին
Ստեփանեան մարկան և առաջնորդները
և երկրորդները համար

Միակ պահեստ գեղարարական ապրանքների վաճառման կովկասեան դեղատան ապրանքների վաճառման ընկերութեան խանութում: 52—100

Ս Ո Ւ Տ Լ Ո Ւ Ր Ե Ր Ը,
որոնք տարածվում են մեր կոնկուրենտների կողմից



Վ. Վ Ի Ս Օ Ց Կ Ի Ե Ի Ը Ն Կ.

ԹԷՅԻ ԱՌԵԻՏՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

մի լրագրի միջոցով, որից յետոյ այդ լրագրին արտասովորական ուրիշ լրագրներում, պատիւ ունիմ յայտնելու ի զիտութիւն ամենքի, թէ

Վ. Վ Ի Ս Օ Ց Կ Ի եւ ԸՆԿ. Ը Ն Կ Ե Ր Ո Ւ Թ Ե Ա Ն

ՄՕՍԿՎԱՅԻ ԹԷՅԻ ԳՈՐԾԱՐԱՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ԱՇԽԱՏԵԼ

առաջիկայ նման նախկին այժմ, շատ աւելի ընդարձակ շինութեան մէջ:
Կառավարիչ Վ. Վիսոցկի եւ ընկ. Թիֆլիսի գրասենեակի՝ **Ա. ԳՐԺԵՐԻՆ**

2—5

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C^{ie}
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՎԱԳԱՅՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԵ Ե ԸՆԿ.

Կանոնաւոր եւ ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԵԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկուշաբթի մի անգամ:


Եւ հակառակը՝ Բաթումից Մարսել, մտնելով Տրապիզոն, Սամսոն և Պոլիս Մեկնում: Բաթումից՝ չորեքշաբթի, 29 մարտի (11 ապրիլի) ժՕՐԺԻ չորեքշաբթի, նաւապետ ԲՈՒԼ: Եւ այսպէս շարունակաբար, երկուշաբթի մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ:

Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմարները տրվում են սովորականից պակաս գներով:

Ամիսը մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բաթումի եւ Անտիբիւրնի մէջ, ընդունելով ապրանքներ բոլոր հիւսիսային նաւահանգիստների համար:

Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ուսանալու համար թող բարենաճն դիմել ընկերութեան գործակալատարներին:

ԲԱԹՈՒՄԻՆՄ—պ. Վիկտոր Գլախին, Նաբէլէ-ժապա թիֆլիսիում—պ. Օ. Գ. Բարիկենդանեանին, Սիմոնի փող. Սոֆիարովիչի եւ Մալախովսկիի ջարդանաւոր: ԲԱԹՈՒՄ—կղ. Վ. Եւ Ի. Մուրաֆեաններին, Նաբէլէ-ժապա փողոց, տուն Կրասնիկովի, № 27: ՆՕՎՕՐՕՍՍՍԻՅԱՎ—Վլադիկաւկազի երկաթուղու առեւտրական գործակալութիւն (Ե. Կ. Զ.) 1—20



Գ Ր Ո Ղ Մ Ե Ք Ե Ն Ա Յ

„ԲԵՄԻՆԳՏՕՆ“

(խական - օրինակելի)

Հ Ա Յ Ե Ր Է Ն Տ Ա Ռ Ե Ր Ո Վ

Շատ կարճ ժամանակից յետոյ ստացվելու է Թիֆլիսում Ժ. ԲԼՕԿ ԵՒ ԸՆԿ. ներկայացուցիչ՝

Է. Ֆ. ԱՌԻՅԵՐՄԱՆԻ ՄՕՏ

Երևանեան հրապարակի վրա:

2—3

ТРЕБУЙТЕ ВЕЗДѢ КАКАО
С.С.ИУ.К. МОСКВА.

52—52
M. 36,019

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ
արանով յայտարարում է, թէ նրա գիւնաւաճան մէջ 1900 թվ. մարտի 28-ին, ժամը 12-ին նըշանակված է աճուրդ՝ կապալով տալու չրմուղ խողովակի շինութիւնը Օլգինսկի փողոցից մինչեւ Կիրակի փողոցը, 200 պազ. սաճէն երկարութեամբ և 5500 ր. արժողութեամբ: Աճուրդին մասնակցել ցանկացողները կարող են տեսնել պայմանագիրը վարչութեան շինարարական բաժնում ամենայն իր օր ժամը 9-ից մինչեւ 3-ը: 2—3

ՄԱՆԿԱՔԱՐԱՁՈՒՂԻ ՄԱՍՍԱԺԻՍԿԱ
ՕՐԻՈՐԴ ՆՈՒՆԷ ԳՐԻԳՈՐԵԱՆ ԳՕԼՕՇԵԱՍ
Հասցէ՝ Красногогорская ул. № 14. 19—21

ՅԻՆԱՐԱՐԱՆ-ՏԵԽՆԻԿԱՆ ԲԻՐՈ
Ինժեներ Ն. Բ. Պասսեկի
Тифлисъ, Михайловская ул. № 116.
Հասցէ՝ Տեխնիկների համար. Тифлис—Пассеку.
ՏԵԼԵՖՈՆ № 642.

ՆԵՐԿԱՑԱՑՈՒՑՈՒԹԻՒՆ
Խօսաց և արտասանման ֆիրմաների:
ԲԻՐՈՆ ՅԱՆՁՆ Է ԱՌԵՆՈՒՄ
կառուցանել
Ամեն տեսակ շինութիւններ, գործարաններ և գործարաններ
ԳԱՋԱ-ՇՈՒԹԻ-ՋՐԱՆՏՔՆԵՐ
Ամեն տեսակ էլէկտրոտեխնիկական կառուցումներ և սարքեր, այսինքն հեռագրիներ, տէլեֆոնների, լուսաւորութեան, տրամվայների և ոյժի հաղորդելու հեւաւորութեան վրա:

ԿԱՆԱԼԻԶԱՑԻԱ, ՎԵՆՏԻԼԱՑԻԱ և ՏԱՔԱՑՈՒՄԸ
ԴՆԵԼ, ԺՈՂՈՎԵԼ և ՍԱՐԲԵԼ
ա մ ե ն տ ե ո ա կ
տիւրբիններ, խողովակներ, մեքենաներ և ջրհաններ:
Կ Ա Ռ Ո Ւ Ց Ա Ն Ե Լ
Ե Ր Կ Ք Է Կ ա մ ա լ ր ջ ն ե ի
և տնակներ:
ՏԵՄԵՆՏԻ ՎԱՃԱՌՈՒՄՆ
(Ե. Կ. Զ.) 80—100